



# ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ



ՀԻՄՆԱՎՈՐ ՊԵՏԵԼԻՔՈՎ ԴԵՊՒ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Թիվ 1(42), 20 փետրվարի, 2022թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԱՅԻՆ ԱՆՅՈՒԴԱՐՁ



**Հ**ունվարի 27-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի մախնական մասնագիտական կրթության «ոստիկան» որակավորման եռամսյա դասընթացն անցնող սովորողների երդման հանդիսավոր արարողությունը:

Ներկա էին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Մուրադյանը, Կրթահամալիրի ղեկավար կազմը, ուսումնա-

կան կենտրոնի անձնակազմը: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետը շնորհավորեց սովորողներին ընդգծելով «Այսօր, առավել քան երբևէ, քաղաքացին պահանջում է, որ իրեն արհեստավարժ և արդյունավետ ոստիկանական ծառայություն մատուցվի, ինչին լիարժեք կարելի է հասնել կիրթ ու պատրաստված ոստիկաններ ունենալով»:

Երդման արարողությունն ավարտվեց հանդիսավոր երթով:

**Ա**վագակային հարձակում և ճանապարհային երթևեկության բնագավառում վարչական իրավախախտումներ:

Փետրվարի 3-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում ապագա պարեկները վարժախաղի միջոցով ներկայացրին ձեռք բերված գիտելիքները բարդ իրավիճակներում կիրառելու հմտությունները:

Վարժախաղերը կազմակերպվել էր «Ծառայության իրականացման մարտավարություն» առարկայի շրջանակներում՝ «Բարձր ռիսկայնությամբ տրանսպորտային միջոցը կանգնեցնելուց հետո վարորդի և ուղևորների

դուրսբերումը, տրանսպորտային միջոցի սրահի և բեռնախցիկի ստուգումը» թեմայով:

Համաձայն առաջադրված սցենարի՝ ՀՀ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնից տեղեկություն է ստացվել ավագակային հարձակում կատարելու մասին: Այս կասկածյալները անհրաժեշտ է ձերբակալել դեպքի վայրից տրանսպորտային միջոցով փախուստի դիմած հանցագործներին: Կապի միջոցներով հայտնվում է հանցագործների գիմված լինելու մասին: Միևնույն ժամանակ արգելափակվում են հարակից փողոցները, կիրառվում «ճանապարհ-



հային ոգնի» տեխնիկական միջոցը:

Մյուս սցենարային խաղը Կրթահամալիրի փորձակայանում էր, որտեղ բեմադրվել էր ավագակային հարձակում բանկի վրա: Այստեղ ապագա պարեկները ցուցադրեցին, թե ինչպես պետք է գործել տվյալ իրավիճակում, ինչպես պետք է բանակցել և վնասագերծել հանցագործին (իրավախախ-

տին), օգնել և հոգեբանական աջակցություն ցուցաբերել տուժածներին, կանխել հետագա վտանգավոր զարգացումները:

Երկու իրավիճակն էլ բեմադրված էր: Ապագա պարեկներին հաջողվեց պատվով կատարել առաջադրանքը, իսկ առջևում իրական կյանքն է՝ տարբեր փորձություններով:



**ՀՀ** ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի անդամներն ու ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առաջին կուրսի սովորողները, որոնք շուտով զորակոչվելու էին պարտադիր զինվորական ծառայության, ճանաչողական այց կատարեցին ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան:

Նրանք շրջեցին համալսարանի տարածքով, հրաձգարանում մասնակցեցին կրակային պատրաստականության պարապմունքներին, վարժասարքերով կատարեցին հրաձգություն և ծանոթացան ուսումնական

պարապմունքների այլ առանձնահատկություններին:

Հյուրերն այցելեցին նաև ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի թանգարան, որտեղ թանգարանի աշխատակիցը խորությամբ ներկայացրեց ՀՀ և ԱՀ ազգային հերոսների անցած փառահեղ ուղին՝ թերթելով ռազմական պատմության կարևորագույն էջերը:

Հանդիպեցին նաև ռազմական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների հետ ու պայմանավորվեցին հետագայում փոխադարձ ճանաչողական այց կատարել ՀՀ ոստիկանության կրթահամալիր:

# 1 ◀ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԱՅԻՆ ԱՆՅՈՒԴԱՐՁ



**Ր**ունվարի 25-ից 27-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կայացավ ԵԱՀԿ-ի ԺՀՄԻԳ-ի կողմից կազմակերպված «Ատելության հողի վրա կատարված հանցագործությունների դեմ պայքարն իրավապահ մարմիններում» թեմայով դասընթաց:

Բացման խոսքով հանդես եկավ Կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ. Մուրադյանը: Ողջունելով փորձագետներին և դասընթացի մասնակիցներին նա նշեց, որ ՀՀ ոստիկանության ղեկավարությունը բարձր է գնահատում ոստիկանության և ԵԱՀԿ-ի միջև առկա համագործակցությունը, և հույս հայտնեց, որ այն կնպաստի ատելության հողի վրա կատարված հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության

բարձրացմանը: Դասընթացը վարում էին ԵԱՀԿ ԺՀՄԻԳ Ատելության հողի վրա կատարված հանցագործությունների դեմ պայքարի հարցերով խորհրդական Վիկտոր Կունդրակը, Բելգիայի ոստիկանության սպա, դասընթացավար Կրիստոֆ դե Բուսերը և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի կողմից սերտիֆիկացված դասընթացավար Հասմիկ Պետրոսյանը:

Եռօրյա դասընթացի ընթացքում ոստիկանության ծառայողները ծանոթացան ատելության դեմ պայքարի արտասահմանյան փորձին, քննության ընթացակարգերին և ուսումնասիրեցին ՀՀ-ում գրանցված մնամորինակ դեպքերի մանրամասները: Վերապատրաստման վերջին օրը բոլոր մասնակիցներին հավաստագրեր հանձնվեցին:

## ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՐՄԻՐ ԱՍՏԴԻ ՇՋԱՆՇԱՆԱԿԻՐԸ



**Հ**այաստանի ներքին գործերի նախարարության կենտրոնական ապարատի և տարածքային մարմինների աշխատակիցներն աղետի գոտում ազգաբնակչության և փրկարարների հետ օրուգիշեր որոնողական և փրկարարական աշխատանքներ են իրականացրել: Առանձնակի պետք է նշել Լեւոնականի ՆԳՎ Շիրակի ներքին գործերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար, միլիցիայի մայոր Համլետ Սահակյանի անձնուրաց աշխատանքը, որի համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով 1989 թ.

պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով՝ աղետի գոտում ակտիվ որոնողական աշխատանքներ իրականացնելու, բնակչությանն աջակցելու, երկրաշարժի հետևանքների չեզոքացման ընթացքում ցուցաբերած արիության համար:

Հավերժ փառք և խոնարհում մարդկային բարձրագույն արժեքներով՝ արդարամտությամբ, բարոյականությամբ և մարդասիրությամբ օժտված մեր հայրենիքի նվիրյալներին:

**Դ. Հովսեփյան**  
ոստիկանության պաշտոնաթղթի գնդապետ

## ՄԵՐ ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐԸ ԱՆՈՒՆԸ ԹԵՎԱՎՈՐՈՒՄ Է, ՈՒՍԱԴԻՐՆԵՐԸ՝ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՒՄ

Հաճախ մենք չենք էլ հասկանում, թե մարդու անունը ինչ մեծ դեր կարող է ունենալ՝ նրա դաստիարակության և կայացման գործում: Անունը թեև է տալիս անհատին, ոգևորում, հնարավորություն տալիս վեր բարձրանալու և պատրաստ լինելու անգամ սխրանքների ու հերոսացման: Այդպես է իմ հերոսուհուն՝ Ժամնայի պարագայում:

Ժիր, աշխույժ, պրպտուն աղջնակին բոլորն էին սիրում դպրոցում և յուրահատուկ քնքշանքով էին արտասանում նրա անունը, իսկ աղջնակը, վերաբերմունքից շոյված, ավելի էր ոգևորվում, և յուրահատուկ փայլով էին ճառագում նրա գեղեցիկ ու սևորակ աչքերը:

Մի անգամ դպրոցի թատերական խմբակի մասնակիցների ուժերով ներկայացում բեմադրվեց, իսկ Ժամնայի մշտի պայերի հաստատակամությամբ ու հպարտությամբ բեմի վրա կերտեց Ժամնա դ'Արկի կերպարը: Իր գեղեցիկ խաղով արժանացավ մեծ համակրանքի և դրանից հետո սկսեց ավելի շատ սիրել իր անունը: Վանաձորի թիվ 29 միջնակարգ դպրոցում սովորելու տարիներին սկսեց զբաղվել սպորտով, որն էլ հետագայում դարձավ նրա տարերքը: Սկզբում նրան հրապուրեց ակրոբատիկան, ապա՝ հեծանվասպորտը, այնուհետև՝ 2005թ. մինչ օրս Ժամնայի զբաղվում է թեթև ատլետիկայով, մուրճի նետման ռեկորդակիր է, ներկայիս գործող չեմպիոն:

Բարձր առաջադիմությամբ ավարտելով դպրոցը՝ ընդունվեց Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բաժինը, որն ավարտեց 2009թ. և ստացավ մարզիչ-մանկավարժի որակավորում: Որտեղ աշխատեց, ուր էլ գնաց, պրպտուն և ստեղծագործ մտքի տեր աղջկան սիրով ընդունեցին: Սակայն մի գեղեցիկ օր նա որոշեց փոխել իր մասնագիտությունը: Դա սկսեց իր զինվորական եղբոր «կարմիր բերետից», որն ասես տակնուվրա արեց նրա անհանգիստ ներաշխարհը: Վաղուց էր ուզում փոխել իր կյանքի ռիթմը. հանգիստ ու միապաղաղ առօրյան իրենք չէր:

2013թ. ժամնայի, առանց վարանելու և առանց դույզն-ինչ երկմտելու, ընդունվեց ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Բազումի բաժնի ՊՊԾ հատուկ դասակ՝ որպես ծառայության տեսուչ: Նոր աշխատանքը նոր խնդիրներ թեւադրեց, և նա ընդունվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի հեռակա ուսուցման ֆակուլտետ, որն էլ ավարտեց 2019թ. և ձեռք բերեց իրավագետի որակավորում:

Համառ, ինքնավստահ, նպատակասլաց, սկզբունքային, շրջահայաց ոստիկանության լեյտենանտն անմիջապես աչքի ընկավ, և 2020թ. նշանակվեց երևան քաղաքի ոստիկանության Կենտրոնականի բաժնի՝ որպես հետաքննիչ: Սիրեց իր աշխատանքը, տրվեց նրան մինչև վերջին բջիջը: Կարգապահություն և օրինականություն հարգող աղջիկը սիրով կրեց համազգեստը, քանզի գիտեր նրա հարզը, և ձգտեց անաղարտ պահել հայ ոստիկանի պատիվն ու արժանապատվությունը: Որպես գեղեցիկ սեռի ներկայացուցիչ՝ ջանաց ավելի բարձրացնել սեփական պատասխանատվությունը և գերազանց կատարել բոլոր հանձնարարություններն ու ծառայողական պարտականությունները: 21° որ ոստիկանության բաժիններում կանայք քիչ են և միշտ ուշադրության կենտրոնում են: Իսկ դա նրան ավելի ու ավելի



իր պարտավորեցնում: Միշտ կատարյալին ձգտող Ժամնայի, ծառայությանը զուգահեռ, սովորում է նաև Կրթահամալիրի մագիստրատուրայում և շուտով կստանա մագիստրոսի կոչում:

2020թ. ոստիկանության պետի հրամանով Ժամնա Համլետի Շահնազարյանը նշանակվեց Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի Ծաղկաձորի բաժանմունքի պետ:

Երբ սկսվեց Արցախյան 44-օրյա պատերազմը, հայրենասիրությամբ տոգորված ոստիկանը մահապարտների զույմարտակի հետ, որի կազմում էին նաև իր անձնակազմի ծառայողները, մեկնեց Արցախ և մասնակցեց մարտական գործողություններին: Դառն ու կսկծալի հիշողություններ մնացին պատերազմից, բայց հպարտ հայուհին անկոտրում է և միշտ մարտական տրամադրությամբ...

Հայրենիքը, հարախառն ոստիկանությունը, բարձր գնահատելով նրա նվիրվածությունը, բազմիցս ներկայացրել է խախուսանքների, իսկ Արցախի Հանրապետության նախագահի կողմից արժանացել է «Արիության համար» մեդալի:

2021թ. նոյեմբերի 19-ին ՀՀ ոստիկանության պետի հրամանով Ժամնա Համլետի Շահնազարյանը նշանակվել է Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետի անձնակազմի գծով տեղակալի պաշտոնին, որի առիթով շնորհավորում ենք նրան և ցանկանում, որ նույն պատասխանատվությամբ և ոգևորությամբ շարունակի գրել իր կենսագրությունը հարազատ ոստիկանության «մեծ ընտանիքում»:

Լինելով շատ ծանրաբեռնված ու բազմազբաղ ոստիկանության սպա՝ զարմանում են, թե ինչպես է կարողանում ազատ ժամանակ գտնել և լցնել գեղեցիկով:

«Սիրում եմ բնություն, ծով, արև, կենդանիներ, սիրում եմ ճամփորդել: ՀՀ թեթև ատլետիկայի հավաքականի կազմում սիրով մասնակցում եմ միջազգային և հանրապետական տարբեր մրցումների, իսկ արդյունքի հասնելու համար ակտիվ մարզվում եմ: Երբեք պասիվ կյանքով չեմ ապրել և առաջիկայումս կծգտեմ մնալ այդպիսին»,-այսպես ասաց շատ զուսպ, բայց չափազանց կենսասեր ու բարի Ժամնայի:

Ժամնա Շահնազարյանը դեռևս ուժերի ծաղկման շրջանում է, իսկ մեր հայրենիքը նրա ու նրա նման նվիրյալ կանանց կարիքը շատ ունի:

Ռ. Մ.

ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ը ՄԱՅՐԵՆԻԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է



Մայրիկ, հայրիկ, հայրենիք. կյանքի հենց առաջին փուլում սկսում ենք խոսել, արտահայտվել սիրել, լսել, կարդալ և մտածել մեր հարազատ մայրենի լեզվով: Եվ այսպեսգ փետրվարի 21-ը Մայրենիի օրն է: 1999-ից ՅՈՒՆԵՍԿՕ-ն օրը հռչակել է որպես Մայրենի լեզվի միջազգային օր՝ նպաստելով լեզուների իրավունքների ճանաչմանը: 2000-ից սկսած՝ փետրվարի 21-ը մայրենի լեզվի գործածության աջակցման օրն է: Մայրենի լեզվի միջազգային օրը միտված է խա-

ղաղ երկխոսությանն ու սոցիալական ներառմանը խթանելուն:

Լեզուները մեր բարոյական և հոգևոր ժառանգության զարգացման և պահպանման ամենահզոր գործիքներից են: 2005 թվականից Մայրենի լեզվի միջազգային օրը մշակեց նաև Հայաստանում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է: Հայերենից բացի՝ Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է նաև ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը:

Մայրենի լեզուն հայ ժողովրդի պատմությունն է ու կենսագրությունը, մտածողության և աշխարհայացքային պատկերացումների մարմնավորումը, մեր անցյալն ու ներկան և, իհարկե, ապագան: Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննես Թումանյանը գրել է. «Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության և էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը»: Իսկ խոսքի մեծ վարպետ Ավետիք Իսահակյանը գրել է. «Մեր լեզուն բարձր լեռներից և խորունկ ձորերից ծնված լեզու է՝ բարձունքների ու խորությունների լեզու: Մայրենի լեզվի բառերը

մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզուները հասկանում, սովորում և հիշում ենք»: ՅՈՒՆԵՍԿՕ-ի գնահատմամբ՝ աշխարհի գրեթե 6 հազար լեզուների կեսը մոտ ժամանակներս կարող են կորցնել իրենց կրողներին: Աշխարհում ամեն երկու շաբաթը մեկ լեզու է անհետանում՝ իր հետ տանելով մի ամբողջ մշակութային և ինտելեկտուալ ժառանգություն: Ինչպես նկատել է լորդ Ջորջ Բայրոնը՝ «Աստվածների հետ խոսելու լեզուն հայերենն է»: Ուրեմն եկեք խոսենք մաքրամաքուր հայերենով, սոցիալական հարթակում գրենք միմիայն հայատառ և բառապաշարում օգտագործենք միայն հայկական ծագում ունեցող բառեր...

Մ. Խերանյան  
նստիկանության կապիտան

**Հայտարարություն**  
Սիրելի սովորողներ, Մայրենիի տոնի կապակցությամբ կրթահամալիրում հայտարարվում է շարադրության մրցույթ՝ «Մեր լեզուն, մեր խիղճն է» թեմայով:  
Հաղթած շարադրությունը կտպագրվի «Պատիվ ունեն» պաշտոնաթերթի հաջորդ համարում:

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԴՎՐՁԱՎ ՀԱՎԱՏԱՄՔ



**«Դուք Ձեր ապրած կյանքը քանի՞ փուլերի կբաժանեք և ինչպե՞ս կընթացնեք դրանք»:**

-Ընդամենը 30 տարեկան եմ, բայց հասցրել եմ շատ բան տեսնել և շատ բան անել: Իմ կենսագրությունը պայմանականորեն կբաժանեի երկու փուլի՝ մինչև զինվորական դառնալս և դրանից հետո: Մինչև 2009թ. կյանքին այլ ակնոցով էի նայում և միաբաժանայն այլ հետաքրքրություններ ունեի, սակայն ամեն ինչ փոխվեց, երբ զորակոչվեցի բանակ և կյանքս կապեցի հայրենիքի պաշտպանության վեհ գործին: Սկսեցի վերահիմաստավորել կյանքը, գնահատել իսկական արժեքները, հատկապես մարդուն՝ որպես ամենամեծ ու բացարձակ արժեք:

**«Իսկ ի՞նչը Ձեզ դրդեց ընտրելու զինվորականի բարդ, պատասխանատու և վտանգներով լի մասնագիտությունը»:**

-Խոստովանեմ, որ սկզբից ինձ ձգում էր համազգեստը: Մի առանձին համակրանք ունեի զինվորական համազգեստի հանդեպ, հետո ավելի շատ գրավեց ներքին կարգապահությունը, ռազմական կարգուկանոնը: Դա մի բնագավառ է, որտեղ ճանաչում ես ինքդ քեզ, հասկանում ես, թե ինչի ես ընդունակ, քեզ կարևորված ես զգում և հպարտ, որ Հայրենիքի պաշտպանն ես:

**«Իսկ ի՞նչ է Ձեզ համար Հայրենիքը»:**

-Նեղ առունով այն իմ տունն է, իմ օջախը, իմ սրբությունները, իսկ լայն առունով իմ ժողովրդի՝ հազարամյակների ընթացքում ստեղծած մշակույթն է, այն հողն է, որի վրա իմ պապերն արյուն ու քրտինք են թափել:

Լսում եմ Արմանին ու հասկանում, որ դիմացս պատահական երիտասարդ չէ, այլ կյանքը հասկացող, կյանքի փորձությունները ծաշակած ու ժամանակից շուտ իմաստնացած անհատ, ով շատ լավ գիտի, թե որտեղից է գալիս և դեպի ուր է գնում:

**«Դուք հիանալի տիրապետում եք օտար լեզուների՝ անգլերենի, ռուսերենի, որոշ չափով նաև գերմաներենի, պարսկերենի և ադրբեջաներենի, ունեք իրավաբանական կրթություն: Ի՞նչը ստիպեց, որ դառնաք պարել»:**

-Ինչպես ասացի, 2009թ. ծառայել եմ բանակում, մասնակցել եմ Ապրիլյան պատերազմի մարտական գործողություններին, առաջին իսկ օրից մասնակցել եմ նաև 44-օրյա պատերազմին, եղել եմ հետախուզական դասակի հրամանատար, մոտ 20 օր մնացել եմ շրջափակման մեջ և բարեհաջող ճեղքելով՝ դուրս եմ եկել շրջափակումից, մասնակցել Մարտունու և Ստեփանակերտի պաշտպանական մարտերին: Կարծում եմ ունեն զինվորական հարուստ փորձ, որին հրաժեշտ տալու փոխարեն կարող եմ կիրառել հետազայում ևս: Դա է պատճառը, որ ցանկացա դառնալ մոր ձևավորված կառույցի անդամ և ամբարած փորձս ու կարողությունս ներդնել այդ ծառայության մեջ:

**«Երբևէ ունեցե՞լ եք իդեալներ և եթե՝ այո՛, ապա՝ ովքե՞ր են նրանք»:**

- Իդեալներ, իհարկե, ունեցել եմ, սակայն ժամանակի հետ նրանք փոխվել են: Երբ դպրոցական էի, պատմա-վեպեր էի կարդում, իդեալներս Ավարայրի կամ Մարդարայտի հերոսներն էին, իսկ երբ ծառայության անցա խաղաղապահ ուժերի բրիգադում, իդեալներս իմ հրամանատարները դարձան՝ իրենց նվիրվածությամբ, կարգապահությամբ, զինվորին հարգելու իրենց ունակությամբ: Նրանցից իմ իրական իդեալներից, շատ բան սովորեցի և ընդօրինակեցի: Նրանց օրինակը հավատամք դարձրած 2020 թ-ից սկսեցի ծառայել Արցախի Հանրապետության Հաղորդի զորամասում որպես դասակի հրամանատար: Երբ իմ զինվորները, որոնք դեռևս չեն զորացրվել ու շարունակում են իրենց ծառայությունը, զանգում են ու իրենց երախտագիտությունն ու հարգանքը հայտնում, հասկանում եմ, որ կարողացել եմ մտնել զինվորների սրտերը և դրական հետք թողնել: Դա ինձ երջանկացնում է:

**«Ըստ Ձեզ՝ ի՞նչ է ընկերությունը»:**

-Ընկերությունը պատերազմի դաշտում ընտանիքի անդամներ են, հաճախ՝ անգամ քո կենդանի մնալու երաշխիքը: Պատերազմի դաշտում չկա ես, կա միայն ՍԵՆՔ: Դժվարություններն ու դժ-

բախտությունները հաճախ ստիպում են մարդուն այլ կերպ մտածել...

**«Ի՞նչ նախասիրություններ ունեք, ազատ ժամերին ինչն՞ով եք զբաղվում»:**

- Նախասիրություններից կնշեմ նկարչությունը: Սիրել եմ նկարել և հետաքրքրվել եմ մեծ նկարիչների կյանքով, բայց հիմա ազատ ժամանակ չունեն կամ համարյա չունեն: Երբ մի փոքրիկ, շատ փոքրիկ ազատ ժամանակ եմ ունենում, ձգտում եմ այն անցկացնել իմ մորաստեղծ ընտանիքի հետ. շատ եմ կարոտում դեռևս տարին չբոլորած դստրիկիս:

**«Երբ կես լուրջ, կես կատակ հարցրի՞ կնամո՞ղ է Արմանը, թե՞ կնամե՞ծար, մի փոքրիկ ժպիտ երևաց նրա լուրջ դեմքին, և առանց շտապելու՝ պատասխանեց»:**

-Իհարկե, կնամե՞ծար: Ես մեծարանքով եմ վերաբերվում հայ կնոջն ընդհանրապես: Մայրս ինձ համար աստվածուհի է: Ընտանիքս իմ ամբողջ է, որտեղ աշխատանքի բաժանում ընդհանրապես գոյություն չունի: Եթե ազատ եմ, ես օգնում եմ տիկնոջս և դրանից չեմ բարդություններ վերստին:

Երկար կարելի էր գրուցել կյանքի յուրահատուկ ճանապարհ անցած երիտասարդի հետ, սակայն նա շտապում էր դասի: Արմանը շնորհակալություն հայտնեց հարցազրույցի համար և գնաց: Նրա գնալուց հետո երկար խորհում էի ընդամենը 30 զարում ապրած երիտասարդի մասին, որը հասցրել է այդքան հարուստ կենսագրություն կերտել և մնալ զուսպ, համեստ, լավատես ու չափազանց արժանապատիվ:

Կանցնեն մի քանի ամիսներ, ու մեր քաղաքացիներին բախտ կվիճակվի փողոցներում, հասարակական վայրերում շփվելու Արման Կարապետյան անուն-ազգանունով երիտասարդի հետ, ով իր անաչառ վերաբերմունքով, սպայավայել կեցվածքով, կոկիկ հագուկապով քաղաքացու մոտ ակնածանք ու համակրանք կարթնացնի դեպի պարելի պատասխանատու և արժանապատիվ ծառայությունը:

Ես առավել քան համոզված եմ դրանում:

Ռ. Մուսաելյան  
լեզուների ամբիոնի դասախոս

Մայրենի, հայրենիք, կյանքի հենց առաջին փուլում սկսում ենք խոսել, արտահայտվել սիրել, լսել, կարդալ և մտածել մեր հարազատ մայրենի լեզվով: Եվ այսպեսգ փետրվարի 21-ը Մայրենիի օրն է: 1999-ից ՅՈՒՆԵՍԿՕ-ն օրը հռչակել է որպես Մայրենի լեզվի միջազգային օր՝ նպաստելով լեզուների իրավունքների ճանաչմանը: 2000-ից սկսած՝ փետրվարի 21-ը մայրենի լեզվի գործածության աջակցման օրն է: Մայրենի լեզվի միջազգային օրը միտված է խա-



## ԻՆՁ ՀԱՍԱՐ ԱՍԵՆԱԹԱՆԿԸ ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒՆ Է Վիկտոր Համբարձումյան

Աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը կյանքի մայրամուտին գրել է կտակ՝ ուղղված իր զավակներին: Մեր խոսքը դրա մի հատվածի մասին է, որտեղ ցայտունորեն զծագրվում է ոչ միայն հոգատար, իր շառավիղներին անհունորեն նվիրված հոր, այլև մեծ հայի և հայրենասերի պայծառ կերպարը:

**Ահավասիկ հինգ կետ կտակից.**

1. «Ես թողնում եմ մեծ քանակությամբ գիտական գրքեր: Դրանք կազմում են մի ամբողջ գրադարան: Այդ իմ գիտական գրադարանը կտակում եմ Բյուրականի աստղադիտարանին: Խնդրում եմ լավ պահպանել:
2. Ինձ հաջորդող սերունդներին՝ թոռներին, ծոռներին և այլն՝ տիրապետել հայոց լեզվին: Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ գրել հայերեն, անկախ նրանից՝ ինչպիսի տոկոս է կազմում նրա մեջ հայկական արյունը: Այդ տոկոսը ոչինչ չի մշտնպես: Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ, և այդ գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է:
3. Այդ կապակցությամբ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է սովորեցնել հաջորդին հայոց լեզուն:
4. Գիտցե՛ք, որ իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է և կմնա, քանի ես ապրում եմ, հայոց լեզվին տիրապետելը:
5. Ցանկանում եմ երջանկություն բոլորիդ: Դա մշտնպես է, որ պետք է լավ տիրապետել հայոց լեզվին»:

Անկասկած է, որ այս իմաստությամբ մեծ գիտնականը հասել է վաստակով ծանրաբեռ իր կյանքի հարուստ փորձով: Կատարելապես տիրապետել էր եվրոպական մի քանի լեզուների, ազատորեն ելույթներ ունենում, դասախոսություններ և զեկուցումներ կարդում. գիտական ամենախորթ մտքեր ու գաղափարներ արտահայտում դրանցով, բայց ուժը տեսնում էր նախ և առաջ իր մայրենի լեզվին տիրապետելու մեջ: Իսկ լեզուն միայն հաղորդակցման միջոց չէ, լեզուն մտածողություն է:

Կենսագիրը մի ուշագրավ վկայություն է տալիս այն մասին, որ Վիկտոր Համբարձումյանը մի անգամ խիստ դառնացել էր այն բանից, որ Բյուրականի աստղադիտարանի գիտնականներից մեկը լավ չի տիրապետում մայրենի լեզվին, թույլ է տալիս սխալներ: «Այսօր ես կարդացի մեր գիտնականներից մեկի դիմումը... ասում է Համբարձումյանը... թուբյլ տվեք անունը չտալ: Մի համառոտ դիմում է, բայց ես հաշվեցի տասներեք կետադրական, ոճական և ուղղագրական սխալ: Մեր գիտնականներից ոմանք չեն կարողանում իրենց մտքերն արտահայտել թղթի վրա և դասախոսություններում»:

Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի համար դա լուրջ մտահոգություն էր: Նա չէր կարողանում տանել իր աշխատակիցների ոչ միայն գիտական, այլև լեզվական անգրագիտությունը:

Դառնալով ակադեմիայի փոխնախագահ, ապա նախագահ, Համբարձումյանը պայքար ծավալեց Հայաստանի գիտնականների և գիտական հիմնարկների գործածական լեզուն դարձնելու հայերենը՝ ինքնին, խրախուսելով օտար լեզուների իմացությունը: Հայտնի է այն փաստը, որ նույնիսկ դրսից եկած ասպիրանտների, ուսանողների համար Բյուրականի աստղադիտարանում գործում էր հայոց լեզվի ուսուցման խմբակ:

Կտակի տողերը հենց այնպես չեն գրվել, դրանք ծնվել են բուն կյանքից և թելադրված են դրանով: Մեծ գիտնականը հայոց լեզվին հետամուտ էր նաև ընտանիքում: Ինչպես հայտնի է, նրա կինը՝ Վերա Ֆեոդորովնա, ազգությամբ ռուս էր: Նրանք ծանոթացել էին Լենինգրադում սովորելու տարիներին, ամուսնացել և երկար տարիներ ապրել ու աշխատել Ռուսաստանում, բայց համատեղ կյանքում ամուսինները և երեխաները լեզվի խնդիր չունեցան ինչպես Համբարձումյանների ընտանիքում բոլորը խոսում էին հայերեն: Արդեն երևանում ապրելու տարիներին ինքը՝ Վերա Ֆեոդորովնան, հայերի հետ խոսում էր միայն և միայն հայերեն: Ականատեսների վկայությամբ նույնիսկ այն ժամանակ, երբ որևէ հայ, հարգելի Վերա Ֆեոդորովնայի ազգությունը, նրա հետ խոսում էր ռուսերեն, տիկին Վերա գրույցը շարունակական էր միայն հայերենով: Դա Համբարձումյանների ընտանիքի չարված օրենքն էր:

Քի չարված օրենքն էր: Պատմում են այսպիսի դեպք. մի հայուհի, ըստ երևույթին ցանկանալով զարգացած երևալ, Վիկտոր Համբարձումյանի հետ սկսում է խոսել ռուսերեն: Համբարձումյանի այն հարցին, թե ինչու է իր հետ ռուսերեն խոսում, տիկինը շփոթված պատասխանում է. «Ես հայերեն լավ չեմ խոսում»: Համբարձումյանը, որ միշտ էլ աչքի էր ընկնում ընդգծված քաղաքավարությամբ և նրբակատ, կիրթ վերաբերմունքով հատկապես կանանց նկատմամբ, զուսպ հեզմանքով ասում է. «Կներե՞ք, տիկին, բայց Դուք ռուսերեն էլ լավ չեք խոսում»:

Ինչպե՞ս կարող էր այլ կերպ մտածել մի մարդ, ով իր կյանքի ամենամեծ երջանկությունը, ինչպես նշել է կտակում, համարել է հայոց լեզվին տիրապետելը, ով գաղափարների մեջ իր համար ամենաթանկը համարել է մայրենի լեզուն: Այլ խոսքով՝ ով իրեն երջանիկ է համարել հայ ծնվելու համար: Դա ազգային սնապարծություն չէր, որի թշնամին մնաց մինչև իր հիանալի կյանքի վերջը, այլ՝ ազգային հպարտություն, որի պահանջը դնում էր բոլորի առջև:

Մայրենի լեզվի մասին Վիկտոր Համբարձումյանի կտակը՝ ուղղված իր զավակներին, նրանց շառավիղներին, կտակ է բոլոր ժամանակների հայ սերունդներին, և նրանք պարտավոր են սրբորեն կատարել մեծ հայրենասերի և մեծ հայի պատվիրանները:

**ԳԻՏԵՔ ՈՐ...**

Լուս Անջելես քաղաքի հուշանվերների խանութներում վաճառվում են յուրօրինակ մոխրամաններ, որոնք տրամադրում են չօխել: Բանն այն է, որ երբ ծխախոտի մոխիրը զգում են մոխրամանի մեջ, լավում է ծխողի հազ հիշեցնող ծայր: Ամեն անգամ մոխրամանը «հազում է» 30 վայրկյան:

Ինչո՞ւ կանայք ավելի լավ վարորդներ են, քան տղամարդիկ: Կապակցված էր անգլիական հեռուստատեսության հայտարարած մրցույթի հարցերից մեկը: Առաջին մրցանակը ստացավ 54-ամյա Եվելին Վուդը, որ պատասխանել էր այսպես. «Որով-

հետ կհին պատմություններից մեկն էր Կոդեյի լեզունը»:

- Եթե Զինաստանի բոլոր 18-ամյա երիտասարդները կանգնեն մեկ շարքով և անցնեն Ձեր կողքով, ապա այդ գիծը երբեք չի ավարտվի: Դա պայմանավորված է նրանով, որ նոր բնակիչների տարիքը կհասնի 18 տարեկանին, և մինչև գծի ավարտվելը, կավելանան նորերը:

- Նորվեգիայի դրոշի վրա կարելի է գտնել 6 երկրների դրոշներ: Ինդոնեզիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների, Թայլանդի, Ֆինլանդիայի և Լեհաստանի:

### Եկեք մտածե՛ք

**խնդիր 1.** Քաղաքացին արևածաղկի վաճառքով զբաղվում էր արդեն երկար տարիներ: Հերթական անգամ, երբ նա նույն գործունեությունն իրականացնում էր հրապարակում, նրան մտեսցավ ոստիկանության աշխատակիցը և փորձեց կանխել վաճառքի իրականացումը՝ պահանջելով ներկայացնել գործունեության իրականացման հիմքեր: Քաղաքացին պնդեց, որ իր կողմից վաճառքը կատարվում է ձեռնարկատիրական գործունեության հիմունքներով:

**Հարց:** Ի՞նչ պայմաններ են նախատեսված ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար:

**խնդիր 2.** Իրեն պատկանող հողատարածքում քաղաքացին տնկեց պտղատու ծառեր: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հողատարածքի ցանկապատումը կփչացներ իր բակային տարածքի տեսքը, քաղաքացին որոշեց չցանկապատել այն: Որոշ ժամանակ անց նա նկատեց, որ իր հարևանն առանց թույլտվության ելումուտ է անում իր հողատարածք: Նա խնդրեց հարևանին այլ ճանապարհով գնալ, սակայն հարևանը հրաժարվեց և հայտնեց, որ քանի դեռ հողատարածքը ցանկապատված չէ, չի կարող նրանը լինել, և եթե նա շարունակի ոտնձգել, ինքը կդիմի դատարան՝ հարկադիր սերվիտուտի պահանջով:

**Հարց** Առաջացած իրավիճակում ով ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ունի:

**Հայտարարություն**

Սիրելի սովորողներ, մարտի 1-9 10-ը խնդիրների պատասխանները կարող եք ներկայացնել քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոն:

## ԱՍԵՆԱԴՊՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՒՆՔ



**ԶՍԽԱՎԿԵՆՔ**

Եկեք ազգովի էլ չսխալվեք, էլ չչարանանք մեկնելու հանդեպ, Չղավաճանք, չդավաճանվեք, Հասկանանք մի բան՝ մենք պետք ենք իրար: Եկեք ազգովի մենք միաբանվեք, Զտարանջատվեք ու ջրովանք, Միշտ պատրաստ լինե՛ք պատերազմների, Եվ չվախենանք մեռնելուց անգամ: Եկեք ազգովի թե՛ թևի տված՝ Սիրենք ու պաշտենք մեր սուր մայրերին, Հասկանանք իրենց սուզ տրտմությամբ, Որ որդեկորույս մնացին հավերժ: Եվ պատմությունը մեր հերոսների Արյան թանաքով գրվեց թղթերին, Եվ արյան գնով ինչ էլ որ լինի, Մենք պարտավոր ենք, որ չսխալվենք: Մեզ ժառանգություն մնացած հողում Եկեք բազմամանք ու քաջեր ծնենք՝ Մոնթե ու Ազատ, Գառնիկ, Անդրանիկ, Սարմեն ու Ալբերտ, Ռուբեն ու Ադամ... Եկեք բարությամբ ողողված ապրենք Եվ չարհամարիենք մեր դիմացիներ, Դժվար պահերին միմյանց սատարենք, Որ էլ ազգովի մենք չսխալվենք: Եթե հավատով մեր օրը ապրենք, Որ չմեղանցենք անգամ երազում, Այդ ժամ դու՛ք էլ, դու՛ք էլ կտեսնեք, Որ մենք ազգովի էլ չենք սխալվում:

**Հովհաննես Ֆահրադյան**  
հեռակա ֆակուլտետի 1-ին կուրս



**ԱՏՈՐՈՒՄՆԵՐ**

Վերջնագծին այդպես էլ չհասար, Վազը իզուր էր, որովհետև և՛ մարմինդ, և՛ հոգիդ այլևս

Քեզ չէին պատկանում: Օտար պարաններով կապվեցիր ու մնացիր կես ճամփին մեն-մենակ...

\*\*\*

Ոչ ոքից ոչինչ չխնդրեցիր, Դու ինքը բոլորին օգնեցիր Ո՛ր միայն վերջում հասկացար, Որ քեզ սեղմած պարանները զգացունք-մերդ էին, Որ նվիրել էիր շատերին...

\*\*\*

Դու չդարձար ինձ բարեկամ, Գոնե լինե՛ք խիստ թշնամի... Քեզ հաղթելու համար կգամ, Կհանձնվեմ սիրուդ գերի:

\*\*\*

Ոչինչ թող քեզ չկանգնեցնի դեպի նպատակ տանող ճանապարհին, բայց երբ հասնես հայրենիքիդ սահմանին, չըզվիր ու կանգ առ... Նպատակդ՝ միայն հայրենիքում, դու՛՛ հայրենիքիդ:

**Սարիան Բաբայան**  
ակադեմիայի 1-ին կուրս